դ) Ուրիշ նպատակով կատարված ծախքերի համար բաց անել հաշիվ ազատ սուռնյակներում, վորտեղ և պետք է զբանցել կերի մթերքները՝ տրված.

1. Զիբրի և յեղների պահպանության.

2. Կաթ ապրանքային ֆերմային.

3. Խոզաբուծական ապրանքային ֆերմային.

4. Վոչխարաբուծական ապրանքային ֆերմային և այլն:

Շինարարական նյութերի նկատմամբ պետք և ազատ սյուն-
յակներում հաշվի առնել շինարարական որչեկաները (լինչ և շին-
վել): Մյուս նյութերի նկատմամբ ցույց են տրվում արհեստա-
նոցներ, ճաշարան, ընթացիկ նորոգում և այլն: Այս գրքում հա-
շիվ բաց անելիս անհրաժեշտ և մթերքները դասավորել ըստ տնտե-
սության (պաշտավարություն, անասնապահություն) և յուրա-
քանչյուր ճյուղում ըստ մթերքների կարևորության, որինակ
հացահատիկ, անասնակեր և այլ ճյուղերի:

Կոլխոզի հաշվապահը տվյալները գրքերում դրանցելիս Հպետք և
ընդունելի վոչ մի փաստաթուղթ, վորը չի բավարարում բոլոր պա-
հանջներին:

Փաստաթղթերը Հպետք և լինեն ջնջված և ուղղված, պետք և
լինի համապատասխան ստորագրություն և գործողությունը կա-
տարելու ժամանակը: Մուտքի փաստաթղթերի վրա պետք և
լինի մթերքներ ընդունողի և նրա պահպանության համար պա-
տասխանատու անձնավորության և այդ մթերքները հանձնողի
ստորագրությունները: Ծախքերի փաստաթղթերի վրա պետք և
լինի մթերք ստացողի ստորագրությունը և վարչության կար-
գադրությունը՝ մթերք բաց թողնելու մասին: Փաստաթղթերի
վոչ ճիշտ կազմելու, նույնպես և մթերքների ու նյութերի վոչ
ճիշտ, անորինական և կամ վոչ նպատակահարմար ծախսումներ
կատարելու դեպքում, կոլխոզի հաշվետարը պարտավոր և անմի-
ջապես հայտնել վարչությանը և վերստուգիչ հանձնաժողովին
միջոցներ ձեռք առնելու, կասեցնելու այդ ծախսումը և մեղա-
վորներին համապատասխան պատասխանատվության կանչելու:

Պահեստապեռից փաստաթղթերը և ամսական շրջանառու
տեղեկագիրը ստանալուց հետո, կոլխոզի հաշվապահը պարտավոր
և նախ ստուգման յենթարկել ու հետո գրանցել մթերքների
շարժման գրքում: Շրջանառության տեղեկագիրը լրիվ կերպով
պետք և համապատասխանի փաստաթղթերին, վորոնց պետք և
պահել առանձին գործում դասավորված ըստ պահեստների*):

Ամբողջ կոլխոզի համար պահվում և մեկ հատ մթերքների
և նյութերի շարժման գիրք անկախ այն հանգամանքից, թե
կոլխոզը քանի պահեստ ունի և այդ գործի համար քանի պա-
տասխանատու անձնավորություն կա: Մթերքները և նյութերի
մեկ պահեստից մյուս պահեստ տեղափոխելը, պահեստից բրի-
դադին հանձնելը և այլն, այս գրքում չեն արտացոլվում: Գիրքը
տարվում և այն փաստաթղթերի հիման վրա, վոր ներկայաց-

*) ՄԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ.—Մքբների յով Յյուրերի շարժման ձեռք № 14 սյու-
սյակը տես գրքի վերջում:

նում և պահեստապետը շրջանառութեան տեղեկագրի հետ միասին (տես ձև № 48):

Յեթի բրիգադին, արհեստանոցին և կամ ֆերմային բաց և թողնվել մթերք, այդ ծախսերի հաշվառումը կատարվում և պահեստապետից ստացված փաստաթղթերի հիման վրա, անկախ այն հանդամանքից, թե այդ փաստաթղթերով պահեստապետի կողմից բաց թողնված մթերքները և նյութերը արհեստանոցի և կամ ֆերմայի կողմից ծախսված են թե վոչ:

Ֆերմաներում, արհեստանոցում և կամ շինարարութեան վրա մթերքների և նյութերի ծախսման և պահպանութեան հաշվառումը և հսկողությունը տանելու նպատակով, կոլխոզի հաշվապահը նույն այդ գրքում բաց և անում ֆերմայի վարիչին և կամ արհեստանոցին առ հաշիվ բաց թողնված մթերքների և նյութերի համար առանձին հաշիվ և տանում և կատարված ծախսումների հաշվառումը համաձայն առ հաշիվ անձնավորութեանների կողմից ներկայացրված հաշվետվութեան (տես մթերքների և նյութերի հաշվառումը ֆերմաներում և արհեստանոցում):

Մթերքների և նյութերի գրքի յուրաքանչյուր մթերքի և նյութի մնացորդը պետք է համապատասխանի պահեստապետի ներկայացրած շրջանառութեան տեղեկագրի մնացորդներին: Մթերքների և նյութերի գրքի և շրջանառութեան տեղեկագրի միջև տարբերություն լինելու դեպքում, հաշվապահը պարտավոր է փաստաթղթերի միջոցով հայտնաբերել տարբերության պատճառները և վերացնել այդ տարբերությունը: Մթերքների և նյութերի շարժման գրքում գրանցվելիք փաստաթղթերի ճշտությունը ստուգելուց հետո, հաշվապահը պարտավոր է անմիջապես այդ փաստաթղթերը գրանցել համապատասխան հաշիվներում, այն է, դրսից ստացված և փողը չվճարած մթերքները և նյութերը գրանցել փոխադարձ հաշվառքի գրքում, այն հիմնարկություն կամ կազմակերպության հաշվում, վորից ստացվել է մթերքը կամ նյութը. սեփական տնտեսությունից ստացված մթերքները համեմատել արտադրական պլանի կատարման հաշվառման գրքի գրանցումների հետ (տես ձև № 72, սյունյակ «աշխատանքի ծավալը»), Զանազան հիմնարկներին կամ կազմակերպություններին բաց թողնված մթերքների փաստաթղթերը անցկացնել փոխադարձ հաշվառքի գրքի հաշվում. կոլխոզիկներին բաց թողնված մթերքները գրանցել կոլխոզիկներին հաշվառքի գրքում: Վերանորոգման վրա ծախսվածը գրանցել ծախ-

սերի գրքում: Արտագրական նպատակով ծախսված կերը, սերմերը և այլն անցկացնել արտագրական պլանի կատարման հաշվառման գրքում, (ձև № 27) և այլն:

Հաշվապահը թե մուտքի և ծախքի փաստաթղթերի վրա պետք է կատարի նշումներ, ցույց տալով վոր հաշվեգրքի և վոր յերեսում կատարվել է գրանցումը. որինակ «տես փոխադարձ հաշվառք, յերես № 26»:

Դրսից ձևք բերված մթերքները և նյութերը մուտք է արվում և ծախսվում գնված արժեքներով. սեփական տնտեսությունից ստացված մթերքները՝ պետական մթերման արժեքներով պետության հանձնելիք մթերքները հաշվել հանձնման փաստաթղթի հիման վրա, կոլխոզային առևտրի գծով վաճառվածը՝ էրական վաճառքի արժեքներով, ինչպես կոլտնտեսականներին աշխուրհերի դիմաց բաց թողնված, նույնպես և տնտեսության արտագրական կարիքների հաշվին ծախսված մթերքներն արժեքավորել պետական մթերման գներով: Ըստ յուրաքանչյուր առանձին հաշվի ամսական շրջանառության տեղեկագիր կազմելու համար անհրաժեշտ է մթերքների և նյութերի հաշվառման գրքում թե մուտքի և թե յեկքի ամսական հանրագումար տալը և վերջին տողում նշանակել գումարները գրամական արտահայտությամբ, հիմք ունենալով նշված գնահատումները:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ (ԾԱԽԵՂՈՒ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Պետության առաջ կոլտնտեսության ապրանքային արտագրանքի հանձնման (ծախելու) պարտավորության կատարման հաշվառման ամենօրյա հսկողությունն ապահովելու նպատակով, կոլխոզի վարչությունը պարտավոր է կազմակերպել պետությանը հանձնվելիք մթերքների իր ժամանակին և խտտագույն հաշվառումը:

Պետության առաջ կոլտնտեսության ապրանքային արտագրանքի հանձնման պարտավորության կատարման հաշվարքը բացի մթերքների շարժման գրքում (ձև № 14) անցկացնելուց, անհրաժեշտ է պարտադիր կերպով գրանցել նաև առանձին գրքում հետևյալ ձևով.

Մթերքի անունը ցորեն. յենթակա յե ըստ պլանի հանձնելու 2000ց. հետևյալ ժամկետներում—15/VIII 1800 ցենտն. և 15/IX 400ցենտն.

Ուղարկված է			Ընդունելի մերթոք					
ժամանակը	Բեռնագրի №	Ուճն է ուղարկված	Փաշը (ցենտն.)	Փոստաբլիզի ար. ար.	Փոստաբլիզի ժամանակը	Փոստաբլիզի №	Փաշ (ցենտն.)	Փոստաբլիզի ար.
10/VIII	193	Յեղեղակայի հանձնման կայանին	164	1312	10/VIII	1781	164	1312
11/VIII	197	Ն ու Ղ ն պ ե ս	240	1920	10/VIII	1741	240	1920

Այս գիրքը տարվում է կոլխոզի վարչության գրասենյակում։

Այս գրքում յուրաքանչյուր տեսակի մթերքի համար բացվում է առանձին հաշիվ։ պետական մթերոդ որգաններին ուղարկվող մթերքի ժամանակ պահեստապետի և կամ բրիգադիրի կողմից գրվում է բեռնագիր (ձև № 15) յերեք որինակից, վորից մեկ որինակը (արմատը) մնում է մթերքն ուղարկողի մոտ, յերկրորդ որինակը ներկայացվում է վարչությանը կալսիչի աշխատանքի ամենորյա տեղեկագրի հետ միասին (ձև № 16) և յերրորդ որինակը մնում է մթերքը կայան փոխադրողի ձեռքին։ Բեռնագիրը գրվում է այն կոլխոզնիկի անունով, վորին հանձնարարված է մթերքի փոխադրումը։ հաշվապահը ստանալով կալսիչի աշխատանքների ամենորյա տեղեկագիրը (ձև № 16) և նրան կցված բեռնագիրը, համեմատում է նրանց ու ապա գրանցում նախ, մթերքների և նյութերի հաշվառման գրքում և հետո ապրանքային մթերքների հանձնման հաշվառման գրքում «ուղարկված է» սյունյակում, ցույց տալով ուղարկված մթերքի արժեքը մթերոդ որգաններին գներով։ Պետ. մթերոդ որգանների կողմից ստացված մթերքի ստացագիրը ներկայացնում է կոլխոզի վարչությանը մթերքը հանձնող կոլխոզնիկը իր վերադառնալու սրը։ Հաշվապահը ստուգելով ստացագիրը բեռնագրի տվյալներով, անմիջապես ստորագրում է փոխադրողի մոտ գտնվող բեռնագրի վրա ստացագիրը ստանալու մասին և համաձայն ստացագրի գրանցում է «ընդունված է պետ մթերոդների կողմից» սյունյակում՝ նրանց քաշը և արժեքը։ Պետ. մթերոդ որգաններին հանձնված մթերքների արժեքը համաձայն ստացագրի գրանցման է յենթարկվում նաև փոխադարձ հաշիվներին գրքում բացված պետմթերոդների հաշվին, (տես ձև № 47) և մթերքների հաշվառման գրքում։

Ուղարկված մթերքների բեռնագրի և ընդունված ստացագրի տարբերության դեպքում հաշվապահը պարտավոր է անմիջապես հայտնել կոլխոզի վարչությանը և վերստուգիչ հանձնաժողովին։

Կոլխոզի վարչութիւնը և վերատուգիչ հանձնաժողովը պարտավոր են պայքարել մթերքների ամեն տեսակի հափշտակութեան ու պակասորդի դեմ մթերքները հանձնման կայան փոխադրելիս, մեղավորներին պատասխանատուութեան կանչելու համաձայն ՍՍՀՄ Կենտրոնական և Ժողովրդական 7/ՄՄ 1932 թ. վորոշման:

Բոլոր մատնանշված տեղեկութիւնները պետութեանը հանձնած մթերքների պլանի կատարման ընթացքի մասին ներկայացվում են վերադաս մարմիններին, միայն հիմք ունենալով այս գրքում գրված «ընդունված և պետ. մթերոգների կողմից» սուսյակի տվյալները:

Յուրաքանչյուր հանձնած մթերքի ընդհանուր գումարը պետք է հավասար լինի մթերքների շարժման գրքի «հանձնված և պետութեանը» սյունյակի ընդհանուր գումարին:

ՄԹԵՐՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Մթերքների և նյութերի պահեստի գիրքը տանում է պահեստապետը պահեստում (ձև № 24). յեթե կոլխոզն ունի յերկու և ավելի պահեստ և նրանց պատասխանատուները տարբեր անձնազորութիւններ են, յուրաքանչյուր պահեստ պարտագիր կերպով պահում է առանձին գիրք:

Պահեստապետի գրքում յուրաքանչյուր տեսակ մթերքի համար բացում են առանձին հաշիվ, հատկացնելով յուրաքանչյուրին այնքան տող, վոր բավականացնի մինչև տարվա վերջը:

Մթերքների մուտքի և յեւքի գրանցումները կատարվում են առանձին փաստաթղթերի հիման վերա:

Առաջին սյունյակում ցույց է տրվում կատարված գրանցումների ամիսը և թիվը:

Հետևյալ սյունյակում ցույց է տրվում փաստաթղթի №-ը, վորից հետո գրանցվում է մուտքի և յեւքի բովանդակութիւնը:

Հաշվառումը տարվում է միայն ըստ քանակի, հաշվի չառնելով գրամական աժեքը անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի մթերքների և նյութերի հետ գործ ունենք:

Տարվա սկզբին պահեստապետը բաց է անում մթերքների և նյութերի գիրքը, գրանցելով այնտեղ մթերքների մնացորդները առ 1 | 1933թ. այն փաստաթղթերի հիման վրա, վորոնք տալիս են մթերքների և նյութերի ստուգված կանխիկ քանակը պահեստում:

Վորոշված ժամկետներին (վոչ ուշ քան 10 որը մեկ անգամ),

պահեստապետը հաշվապահութեանը հանձնում է միջերփնիրի և նյութերի յեւքի և մուտքի բոլոր փաստաթղթերը, և ինչպես զըմ-ված ձևումն է ցույց տրվում, հաշվապահը գրքում անում է հա-մապատասխան նշումներ և ստորագրում է այդ փաստաթղթերն ընդունելու առթիվ: Փաստաթղթերը հաշվապահն ընդունելիս, ստուգում է նրանց ճիշտ լինելը և համեմատում պահեստապետի միջերփնիրի և նյութերի գրքի հետ: Այստեղ հաշվապահը պարտա-վոր է ուղղել կատարված սխալները և տալ հրահանգ, թե զերքն ինչպես պիտք է ճիշտ գրանցել:

Ամսվա վերջին պահեստապետը զուրս է բերում յուրաքան-չյուր միջերքի ընդհանուր գումարը, թե մուտքի և թե յեւքի և մնացորդները անցկացնում շրջանառութեան տեղեկագրում (ձև № 48). մնացորդները համեմատվում են կուլխոզի վարչութեան գրասենյակում տարվող միջերփնիրի և նյութերի հաշվառման գրք-քի մնացորդների հետ:

Պահեստապետի աշխատանքները սխտեմատիկ կերպով ստուգման յենթարկելու նպատակով, վեստուզիչ հանձնաժողովը յուրաքանչյուր ամիս ստուգման է յենթարկում պահեստապետի բո-լոր փաստաթղթերը և տալիս է իր յեզրակացութեանը մուտքի և յեւքի ճշտութեան, միջերփնիրի և նյութերի հաշվառման և գոր-ծերի պահպանման գրքութեան մասին: Պահեստի ստուգումը ձևա-կերպովում է կազմված ակտով: Վերստուգիչ հանձնաժողովի կողմից ստորագրված և վարչութեան կողմից հաստատված ակտը հանձնվում է կուլխոզի վարչութեանը: Նա կարող է հանդիսանալ հաշվառման փաստաթուղթ միջերփնիրի և նյութերի պակասորդ և կամ ավելա-ցում հայտնաբերելու դեպքում: Այդ դեպքում ավելցուկը մուտք է արվում միջերփնիրի և նյութերի շարժման գրքի «մուտք է յեղել սեփական անտեսութեանից» սյունյակում: Միջերփնիրի և նյութերի պակաս լինելու դեպքում պակասած քանակը պետք է անցկացնել պահեստապետի հաշվին: Յերկու դեպքումն էլ պետք է հայտնաբերել պակասորդի և ավելցուկի պատճառները և անել համապատասխան հետևութեան:

Պահեստի մեկ պահեստապետից մյուսին հանձնելը կատար-վում է նույնպես ակտով, կուլխոզի վարչութեան և վերստուգիչ հանձնաժողովի անդամների ներկայութեամբ,

ՊԱՀԵՍՏԻ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳԻՐՔ

Անունը-ցորեն (ցենսներով)

Ամիս և թիվ	Փաս- տաթղ- թի №	Ումից և ստացված կամ ուժ և բաց թողնված	Քանակը հաշվով կամ քաշով	
			Մուտք	Յեւք
1 VIII	—	Մնացորդ առ 1/VIII	137	—
10 VIII	41	№ 2 Բրեղադից	219	—
11 VIII	142	№ 1 »	225	—
15 VIII	Բևս.-87	Սարդարաբատի մթ. կայանին	—	185
16 VIII	88	» » »	—	135
17 VIII	89	Կոլխոզնիկներին	—	36
18 VIII	42	№ 2 Բրեղադից	244	—
18 VIII	159	» 1 »	221	—
21 VIII	43	» 2 »	216	—
21 VIII	160	» 1 »	266	—
22 VIII	90-100	Սարդարաբատի մթ. կայանին	—	200
23 VIII	101-120	» » »	—	360
23 VIII	43	№ 2 Բրեղադից	247	—
23 VIII	121-130	Սարդարաբատի մթ. կայանին	—	280
23 VIII	161	№ 1 Բրեղադից	231	—
24 VIII	131-150	Սարդարաբատի մթ. կայանին	—	360
25 VIII	151	Կոլխոզնիկներին	—	42
26 VIII	152	Անասնակեր ԿԱՖ	—	6
26 VIII	153	» ԽԱՖ	—	3
26 VIII	154	» քաշող անասուն	—	7,30
			2006	1614-30
Մնացորդ առ 1/IX			—	391-70
			2006	2006

ՄԹԵՐԻՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՄՈՒՏՔԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ՝

Մթերքների և նյութերի մուտքի գրանցման համար վորպես հիմք ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը:

ա) Սեփական տնտեսության բուսական արտադրությունից ստացված մթերքների համար,— կալսիչի և կամ մթերքի հավաքման վայրից բրդադիրի և կամ կշտողի կողմից ուղարկված բեռնազիրը: Առանց կոլխոզի պահեստ մանկուլ անմիջականորեն մթերոզ մարմիններին հանձնելու դեպքում, վորպես փաստաթուղթ ծառայում է ընդունման ստացագիրը: Սոտ, գարման և այլ յերկրորդական մթերքներ մուտք են արվում կազմված ակտերի հիման վրա:

բ) Անասնպահական ձեռնարկումներից ստացված մթերքների փաստաթուղթ հանդիսանանում է ֆերմայի վարիչի հաշվետվությունը ստացված արտադրանքի քանակի մասին: Այդ հաշվետվությունը ստուգվում է աշխատանքի հաշվառման տվյալներով, կաթի տեղեկագրերով և այլն:

գ) Գնված մթերքների և նյութերի համար՝ այդ մթերքները վաճառող կազմակերպությունների ներկայացրած հաշիվը, բեռնազիրը, ֆակտուրան և այլն:

դ.) Կոլխոզային առևտրի նպատակով կոլտնտեսականներից ստացված մթերքների և նյութերի համար ընդունման ստացագիրը:

Բեռնագիրը (№ 15) ունի հետևյալ ձևը

Ձեռլ № 15

ԲՐԻԳԱԿ № 2

Փոխադրող Հո վ ս ե փ յ ա ն
10/VIII 1933 թ.

Բ Ե Ռ Ն Ա Գ Ի Ր № 41

Ուղարկման կայան, կալսիչ № 3

Ուղարկված է		Ուղարկվածի անունը	Ընդունված է	
Պարկ.	Քաշ.		Պարկ	Քաշ
5	300 կիլ.	Ցորեն, պահեստին (յերեք հարյուր կիլ.)	5	300 կիլ.
Ստորագրող-թյուններ.		Ուղարկեց՝ Կիրակոսյան	Հանձնեց՝ Հովսեփյան	Ընդունեց՝ Յեփրեմյան

Բեռնագիրը ներկայացնում իրենից մուտքի փաստաթուղթ հետևյալ դեպքերում.— կալսիչի մոտից կամ կալից ուղարկվող ծեծված ցորենը հաշվի առնելիս, արտադրության վայրից-ֆերմայից

բանջարանոցից, այգուց, վերանշակման վայրից պահելու տեղը ուղարկելով միմեքեքները հաշվի առնելիս և այլն:

Բեռնագիրը կարող և փաստաթուղթը լինել միայն այն պայմանում, յեթե նրա վրա կա միմեքեք ստացողի ստորագրութիւնը: Կազմելի մտտից ցորենը ուղարկելիս նունպես և մյուս բոլոր դեպքերում, կշտողը և կամ բրիգադիրը գրում և բեռնագիր յերեք որինակից: Յորեն փոխադրողի հետ ուղարկվում և բեռնապրի յերկու որինակը: Բեռնագիրը գրում են այնպես, ինչպես ցույց և արված որինակում: Պահեստապետը կշտում և ուղարկված ցորենը, ստորագրում և ուղարկված յերկու որինակ բեռնագիրը, վորից մեկը փոխադրողի միջոցով հետ և ուղարկում բրիգադիրին հանձնելու, իսկ մյուս որինակը պահում և իր մոտ վարչութիւնը ներկայացնելու համար:

Վորովհետև պահեստապետի ստորագրութիւնը բրիգադիրի մոտ յեղած բեռնագիրը նոյնպես հանձնվում և վարչութիւնը, կոլտողի հաշվապահը պարտավոր և ստուգման և համեմատութիւն յենթարկել այդ յերկու որինակ բեռնագիրները: Այս բանը վերացնում և զեղծարարութիւն կատարելու հնարավորութիւնը: Ձեռնամներ և ուղղումներ բեռնագրի վրա, ում կողմից ել ուղում և լինի, չի թույլատրվում:

Այս փաստաթղթով ձեռնակերպվում են նաև անասնապահութիւնից ստացված միմեքեքները (բուրդ, մեղր, ձու և այլն): Կաթը մուտք անելու կարգի մասին կապի ներքեում առանձին: Մշակված միմեքեքների պահեստ հանձնելու ճշտութիւնը հսկելը իրականացվում և զանազան ձևով: Կալսիչի մտտից կամ կալից ստացված ցորենը ստուգվում և և հսկողութիւն և յենթարկվում կալում, ծեծված ցորենի մասին ուղարկող ամենորյա տեղեկագրի միջոցով (տես ձև № 16):

Ծեծված ցորենի հաշվառքի և պահպանութիւն պատասխանատվութիւնը վարչութիւն հսկողից դրվում և բրիգադիրի վրա, տալով նրան վորպես ոգնող առանձին կշտող: Բրիգադիրի կողմից ստորագրված ամենորյա տեղեկագիր ներկայացնելը պարտադիր և: Հաշվապահը ստուգում և ամենորյա տեղեկագրով պահեստին հանձնված ծեծած ցորենի քանակը, այդպիսով հաստատում և նրա մուտք լինելու ճշտութիւնը: Բեռնագրի և ամենորյա տեղեկագրի միջև տարբերութիւն լինելու դեպքում, վարչութիւնը և վերաստուգիչ հանձնաժողովը պարտավոր են ստուգման յենթարկել, թե ինչից և այդ առաջացի:

Հավաքված խտտի և հարզի քանակը վորոշելու համար կազմվում է այդ միերքների ընդունման ակտ № 17 ձևով: Նա կազմվում է բրիգադում և ներկայացվում է կոլանտեսութան վարչությանը խտտը և դարմանը հավաքելուց անմիջապես հետո ղեկով կամ թեղով: Վարչության կարգադրությամբ այդ ղեկերը հանձնվում են կոլանտեսության վորեզի ճյուղին պահպանելու: Նրանց ընդունող անձը՝ ճյուղի վարիչը կամ նրա տեղեկավարը, խտտի կամ դարմանի պահպանության պատասխանատվությունը վերցնում է իր վրա:

Դեղի ծավալը վորոշվում է այսպես: Չավրվում է ղեղի յերկարությունը, հիմքի լայնությունը և բարձրությունը մինչև ղեղի աչն մասը վորտեղից ղեղը սկսում է նեղանալ:

ԲՐԻԳԱԴԱ № 1

Ձև № 16

ԿԱՆԱԽՁ № 3. ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ՄԵՔԵՆԱ № 42. ՀԵԻԹ № 1
ԱՄԵՆՈՐՑԱ ՏԵՂԿԱԳԻՐ ԿԱՆԱՍՏՁ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐՎԱԾ
ՅՈՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Կուլտուրա՝ զարնանացան ցորեն. 16/VIII 1933 թ.

Կարիչի արտադրողականությունը ցենսներով. մեկ ժամում 13, մեկ հերթում 130. աշխատանքը սկսվել է առախոտյան ժամը 5-ին, վերջացել է յերեկոյան ժամը 5. 20 ր. մեկ հերթի ընթացքում կարել է նաև 6 ղեղը, 13 սայլ: Աշխատել են 18 մարդ և 6 ձի:

ԿԱՆԱՍԵԼՈՒՑ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՍՏԱՅՎԵԼ Ե

Կ2ուվածի հերթակամ № №	Կ2ուված մեշակների յեվ կամ ուրիշ տարրայի հանակը	Կ2ուված ցորենի մատր բաշը ցենտներով յեվ կիլոգրամներով			Տակամբ
		I-րդ տեսակ	II-րդ Տեսակ	III-րդ Տեսակ	
Մնացորդ անցած հերթից					
1	7	450 կիլ.	—	—	Մեկ ցենտներ տակամբ
2	5	—	450 կիլ.	—	
3	5	350 »	—	—	
4	4	—	270 »	—	
5	3	—	—	220 կիլ.	
յեվ այլն					
Ընդամենը ստացված է մեկ հերթում	228	106 ց.	42 ց.	3 ց.	2 ց. 50 կիլ.

ՈՒՂԱՐԿՎԱԾ Ե ԿԱԼՍԵԼՈՒՑ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Վարտեղ և ուղարկված	Ուղարկված և մախար բաշ (ցեմտն. կիլ. գր.)				Բեռնագրի №
	I-ին տես.	II-րդ տես.	III-րդ տես.	Տակամբ	
№ 1 պահեստ	19,00	13,00	3,00	2,50	6—7
№ 2 պահեստ	.	29,00	.	.	8—9
Մրբրման կայան	87,00	.	.	.	10—11—12—13
Ընդամենն ուղարկված և կալում մնացել և հետևյալ հերքին	106 ց.	42 ց.	3 ց.	2 ց. 50	

ԿԱԼՍԻՉԻ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂԻ ՊԱՐԱՊՈՒՐԴ ՄԵՎ ՀԵՐԹՈՒՄ

Պարագուրդի տեղագրությունը	Պ ա տ ն ա ռ ն ե ր ը	Ստորագրություններ	
		Մեխանիկ	Բրիգադիր
1 ժամ	Ընդմիջումն առաքիվ	Հայրապետյան	Գրիգորյան

Նպտակները լիազորներ՝ Հայրապետյան, Գրիգորյան

Բազմապատկելով այդ յերեք թվերը կտաացվի զեղի ներքեվի մասի ծավալը: Հետո հափվում և զեղի վերին մասի նեղ տեղի բարձրութունը, բազմապատկելով զեղի այդ մասի լայնության կեսը դեպի ամբողջ յերկարության և բարձրության վրա, կտաացվի զեղի վերեվի մասի ծավալը. դուսարելով այդ յերկու ծավալները, կտաացվի զեղի ամբողջ ծավալը:

Վարպեսզի զեղի ծավալով վորոշենք զեղի քաշը, հարկավոր և ծավալի միավորի քաշն իմանալ, որինակ մեկ խորանորդ մետրի քաշը:

Մեկ խորանարդ մետր խոտը կշռում և՛

1. Թարմ դարսած խոտ 0,65—0,85 ցենտ
2. Մեկ ամսից հետո դարսած խոտ 0,9 ,, ,,
3. Յերեք ,, ,, ,, ,, ,, ,, 0,1 ,, ,,

Դեզի ծավալն արտահայտված մետրով, բազմապատկելով մեկ խորանարդ մետրի քաշի վրա, կտաացվի ամբողջ խոտի քաշը:

Այդպիսով այդ փաստը դառնում և արդարացուցիչ փաս-

տաթուղթ, վորով հաշվապահը կատարում է խոտի կամ դարմանի մուտքի գրանցումները գրքերում: Ակտում գրանցումները կատարվում են հետևյալ կերպ:

ԱԿՏ № 4

ԶեՎ, № 17

ԽՈՏԻ ՅԵՎ ԴԱՐՄԱՆԻ ՀԱՎԱՔԱՍԾ ԲԵՐՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ. ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒՄ 1933 Թ. № 2 ԲՐԻԳԱԴԻՑ

Հոսանքի №	Տարածությունների կատարման վորակը	խոտի յեվ դարմանի անունը յեվ վորակը	Դեղի ծավալը մետրներով				Քաշը				Ընդունման Ստորագրություն
			Մուտքավորում	Մեղման	Մարմարային	Մուտքավորում	Մեղման	Մարմարային	Մուտքավորում	Մեղման	
2	420	Ցորենի դարման	10	4	3	4	140	0,7	98	կափ.	Առաքելյան

Յեթե խոտի և դարմանի դեղերի հանձնումը չի կատարվում միանգամից, յ երբ նրանք դիվում են, այդ դեպքում նրանց պահպանության գործի պատասխանատուն համարվում է այն բրիգադը, վորն այդ աշխատանքը կատարել է:

Նույնպիսի կարգով մուտք է արվում նաև սիլոսը: Սիլոսի աշտարակները կամ փոսերը բաց անելիս, յեթե հայտնաբերվում է փչացած մաս, կազմվում է և ակտ: Դա փաստաթուղթ է ծառայում սիլոսի քանակից դուրս գրելու փչացած մասը:

Նոր ընդունված կոլտնտեսականներից համայնացրած մթերքները (սերմացու) ընդունելիս, պահեստապեսը գրում է բեռնագիր և պատճենը հանցնում նոր ընդունվող կոլտնտեսականին: Հանձնված սերմացույի կամ մթերքի ճշտությունը ստուգման է յենթարկվում № 15 ձևով:

Մորթած անասուններից ստացված միսը, կաշին և այլն մուտք է արվում գույքի լուծարքման ակտի հիման վրա (ձև № 9):

Այդ ակտի հետևի մասում ցույց են տրվում մորթած անասունից ստացված մթերքները, վորտեղ և ստորագրում է պահեստապեսը կամ ուրիշ անձնավորություն, վորին հանձնվում է այդ մթերքը:

Ակտի հակառակ կողմն ունի հետևյալ ձևը (ձև № 9).—

№ Ն Հատ կար- գի	Ն Լուծարկից ստացված մրեր- մերի յիվ Սյուրբրի ամուցը	Քանակը	Արժեքը	Քուտաքը ոտրով
1	Միս	110 կիլ.	2	220
2	Կաշի	11 »	3	33
3	Մորթած տավարի վոտզուխ	15 »	1	15

Մրերմերի յիվ ճյուրբեր ստացող անձնավորության ստորագրությամբ

Վոչխարարուծական ֆերմաներից (բուրդ), թռչնարուծական (ձու) և մեղվաբուծական (մեղր) ստացված արտադրանքը մուտք է արվում բեռնագրով: Վերստուգումը կատարվում է բրիգադրի հաշվետվութայմբ № 35 ձևով (Աշխուրերի և մթերքների հաշվառման թերթիկ):

Դրանից ստացված բոլոր մթերքները և նյութերը մուտք են արվում ըստ հաշիվների և ֆակտուրաների և կամ պետական ու կոոպերատիվ կազմակերպութունների փաստաթղթերով: Արժեքներն ստանալու մասին ստորագրում է պահեստապետը:

Այն դեպքում, յերբ ԿԱՖ-ում ստացված կաթը պահեստին չի հանձնվում, ամբողջ հաշվառումը տարվում է ֆերմայում:

Կաթի հաշվառումը տարվում է կթողի հաշվառման թերթիկում № 30 ձևով, վորը գրվում է «Աշխատանքի հաշվառման» մասում:

Յուրաքանչյուր ամիս այդ թերթիկը ֆերմայի վարիչի հաշվետվութայն հետ (ձև № 38) ներկայացվում է վարչութայնը: Բոլոր կթողների կաթի քանակը ցույց կտա ամսվա ընթացքում կթած կաթի քանակը: Կթողներից ստացված կաթի քանակը ստուգում են որեկան կոնարոլ կթի գրքի միջոցով, վորտեղ վոչ ուշ, քան յերեք ամիսը մեկ անգամ դուրս է բերվում յուրաքանչյուր կովից կթած կաթը և ամսական միջին կիթը: Վերստուգումը կատարում է ֆերմայի վարիչը՝ գլխավոր կթողի մասնակցութայմբ:

Կոլխոդի վարչութայն գրասենյակում վերստուգումը կատարվում է ֆերմայի վարիչի կողմից ներկայացրած հաշվետվութայն միջոցով, համեմատելով ստացված կաթի քանակը աշխուրերի հետ և կթող-անասնապահի հաշվառման թերթիկով:

Բացի դրանից, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է վոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ ստուգել ֆերմայում մուտք արված կաթի հաշվառքի դրվածքը: Վերստուգիչ հանձնաժողովը

կարող ե պահանջել յուրաքանչյուր կողից կթված կաթի քաշը վերատուգում անցկացնելու համար: Նա միաժամանակ ստուգում ե կաթի ե կերի ծախսման կարգը ե ճշտությունը:

Յեթի կաթը պահեստ չի հանձնվում,—Ֆերմայի վարիչը պարտավոր ե ֆերմայում ստացված ե ծախսված կաթի հաշվառումը տանել պահեստապետի մթերքների ե նյութերի գրքի ձեւով (ձև № 24) ե ամեն օր գրանցել մուտքը ե յեւթը:

Առանձնակի ուշադրություն պիտի դարձնել չկալոված հացի հարցին. հացի դեղերը պետք ե հաշվի առնվին ե պետք ե ունենալ նրանց պահպանության համար պատասխանատու մարդիկ:

Չկալոված հացի հաշվառումը կատարվում ե կոլխոզի գրասենյակում ե յուրաքանչյուր բրիգադում ախտերի կամ ցուցակագրության միջոցով, վորոնց ձեւերը համապատասխանում են բրիգադներից ընդունված խտտի ե դարմանի բերքի հանձնման ակտին:

Յուցակում ցույց ե տրվում դեղերի քանակը, նրանց չափը ինչպես ըստ ծավալի, նույնպես ե խուրձերի քանակով: Յուրաքանչյուր դեղ ունենում ե իր համարը: Փորձնական կալի միջոցով ստացված բերքատվության տվյալներով վորոշում են, թե յուրաքանչյուր դեղից վորքան հացահատիկ կարող ե ստացվել:

Այդ տվյալների հիման վրա ախտ են կազմում ե մուտք գրում կոլխոզի ամբողջ չկալոված հացը:

ՄԹԵՐՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մթերքների յեւ նյութերի ծախսումները ձևակերպվում են հետևյալ փաստաթղթերով:

1. Մթերման կայանների ընդունման ստացագրերը պետությանը հանձնած արտադրանքի համար:

2. Արտադրական ե տնտեսական կարիքների համար բաց թողածը ձևակերպվում ե կարգադրություն-պահանջագրով—ձև № 18:

ԿԱՐԳԱԴՐՈՒՅՈՒՆ (ՊԱՀԱՆՋԱԳԻՐ) № 9

Պահեստին № 1

10 հունվարի 1933 թ.

Բաց թողնել (ում) թորոսյանին, բրիգադ № 2

Ա ն ու ն ը	Պահանջվում է բաց քողմել		Բաց է քողմված		Գումարը առբի	
	Քամակը	Քաշը	Քամակը	Քաշը		
Վերի վարսակ . . .	—	500 կիլ.	—	500	—	—
Թեփ	—	50	—	50	—	—
Ստորագրուք.	Պահանջողի՝ Թորոսյան	Վարչություն՝ Սարգսյան	Բաց քողմողի՝ Ղուկասյան		Ստացողի՝ Թորոսյան	

Կարգադրու թյունը գրում է հաշվապահը յերեք որինակից։ Արմատը մնում է վարչության մոտ, իսկ յերկու որինակը ստորագրված՝ պահանջողի և վարչության կողմից՝ հանձնվում է մթերք ստացողին։ Դա և ծառայում է արգարացնող փաստաթուղթ պահեստապետի համար և հիմք՝ հաշվապահության գրանցման համար։ Կարգադրության յերկու որինակից մեկը մնում է պահեստապետի մոտ՝ ստորագրված մթերքները ստացողի կողմից, իսկ մյուսն ուղարկում են ֆերմա կամ բրիգադին, վորը ստացել է մթերքները։

Կարգադրություն (պահանջագիր) հիման վրա պահեստից բաց են թողնվում արտագրության նպատակների համար բրիգադին՝ սերմացու, ֆերմային՝ կեր, մթերքներ և այլ արժեքներ։

Մթերք ստացողի ստորագրությամբ կարգադրություն-պահանջագիրը պահեստապետից ստանալով, հաշվապահը ստուգման է յենթարկում փաստաթղթի ճշտությունը, համեմատելով արմատի հետ։ Կարգադրությունը դուրս է գրվում անպայման համարակալված, համարակալումը տարվում է հերթականությամբ անընդհատ մինչև տարվա վերջը։ Քաղվածքը կատարվում է բրիգադի գրքույկում, վորպիսին պահվում է հաշվապահի մոտ։

Մթերքների և նյութերի բաց թողնելու ձևակերպման այդպիսի կարգ տեղի չե ունենում նաև ճաշարանում, փողում և այլն։

Բրիգադին, արհեստանոցներին և արդյունաբերական ձեռնարկներին մթերքներ և նյութեր բաց թողնելիս պետք է հաշվե առնել մեկ արտակարգ կարևոր մոմնտ, վորը վերաբերում է գլխավորապես կոլտոզի հաշվապահին։ Դա յեկամուտի աղբյուր-

ների և ֆոնդերի ճիշտ հաշվառումն և, վորոնց հաշվին կատարվում է մթերքների և նյութերի բաց թողնումը:

Արտադրական պլանով յուրաքանչյուր բրիգադի համար սահմանվում են վորոշ քանակով մթերքներ, վորոնք պետք է ծախսվեն տարվա ընթացքում յուրաքանչյուր ամիս: Նույնը և արդյունաբերական ձեռնարկների նկատմամբ: Փերմայի համար — կերի ծախսման նորմաները և ֆերմային հատկացված կերի ֆոնդի չափը: Շինարարական բրիգադներին բաց թողնելու հիմք ծառայում են պահանջվող նյութերի հաշիվները և հաշվառքները: Հասարակական սննդի համար — կոլխոզնիկների կողմից կազմած ֆոնդի չափը: Նույնը և փոխ համար, իսկ յեթե թխված հացը գնում է ծախելու համար, այն ժամանակ կոլխոզային առևտրի համար առանձնացվում է վորոշ ֆոնդ և այլն:

Յուրաքանչյուր անգամ կարգադրություն-պահանջագիր դուրս գրելիս հաշվապահը պարտավոր է վերանայել, որինակ՝ ֆերմայի կողմից վորքան կեր է ծախսված և արդյոք նրան հատկացրած հասանելիքից ավելին չի ծախսվել, և կամ կարելի չէ ճաշարանին մթերք բաց թողնել և չի՞ պերպանցվում հասարակական սննդի այն ֆոնդից, վորը կազմված է աշխորերին հասանելիք մթերքներից: Կոլխոզում բոլոր մթերքները պետք է ունենան իրենց նպատակային նշանակությունը: Վոչ մի դեպքում չի թույլատրվում առանց վերաստուգման ծախսելու սնանակերը և սերմացուն, ապահովագրական ֆոնդերը, աշխորերին հասանելիք ֆոնդերն ուրիշ նպատակի համար:

Կոլխոզային առևտրի գծով պահեստից մթերք բաց թողնելիս դուրս է գրվում կարգադրություն-պահանջագիր: Մթերքները ստանում է կոլխոզային առևտրի համար նշանակված պատասխանատու անձնավորությունը, ինչպես որինակ՝ կոլտնտ. խանութի վարիչը: Սայլով վաճառելիս պատասխանատուն համարվում է վաճառողը: Վաճառողին կամ խանութի վարիչին բաց թողած մթերքի արժեքը մինչև վաճառելը և հաշվետվություն ներկայացնելը գրվում է նրանց անձնական հաշվին, վորպես առ հաշիվ գումար: Այդ դեպքում կոլխոզի հաշվապահը ծախսված մթերքների առթիվ կատարում է գրանցում, հիմք ունենալով կարգադրության վրա յեղած մթերք ստացողի ստորագրությունը, նշում է դուրս գնացած մթերքի միայն քանակը, իսկ արժեքը նշանակում է այն ժամանակ, յերը մթերք վաճառողի կողմից մթերքի վաճառքի մասին կատացվի հաշվետվություն:

Շուկայում վաճառած մթերքի հաշվետվութունը կազմվում է յուրաքանչյուր որ (ձև № 21) վաճառողի կողմից, հետևյալ ձևով:

Ձևվ № 21

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՎԱՃԱՌՎԱԾ ՄԹԵՐՔՆԵՐԻ

Մարտի 1-ից — 2-ը 1933 թ.

Մթերքների անունը	Ս տ ա ց վ ի լ է						Վաճառվել է		Մնացել է (քանակ)
	Մնացել է	Սեփական տնտեսություն	Կոլտնտեսություններից	Անաստան տնտեսություններից	Ընդամենը մնացորդ	Ընդամենը մնացել է	Քանակը	Գումարով և ուր.	
Փյու. հաց	—	—	100 կիլ.	50 կիլ.	150 կիլ.	150 կիլ.	450	—	—
Գարսոփիլ	280 կիլ.	200 կիլ.	—	—	480 կիլ.	140 կիլ.	410	—	80 կիլ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

	Գումար		Փաստաթղթի №-ը յեվ բացատրություն ծախքերի մասին	Նշումներ գրասենյակի կողմից
	ա.	կ.		
Մնացորդ անցած հաշվետվութունից	4	80		
Ստացվել է վաճառքից	860	—		
Ընդամենը մնացորդով	864	80		
Ծախսված է	—	—		
Ցեներակա յե համձաման	864	80		
Համձամված է գանձապահին (կամ մուծված է ընդհանրվին)	864	80	Մուտքի որդ. № 174	
Մնում է առհաշիվ . . .	—	—		

Հաշվետվութունը հաստատված է նախագահի ԲԱՐՍԵՂՑԱՆ

11 մարտ. 1933 թ.

Հաշվետվութունը գրանցված է 12 մարտ. 1933 թ. Հաշվապահի ԳՐԻԳՈՐՑԱՆ

Այսպիսով խանութի վարիչի ներկայացրած հաշվետվութունը արտացոլում է մթերքների շարժումը հաշվետու ժամանակաշրջանում, հաշվի առնելով մթերքների մնացորդները, մուտ-

քը և ծախսը: Վաճառողը հաշվետվութեան մեջ հաշիվ և տալիս նույնպէս միջերփնեցիկ վաճառքից ստացված գումարների մասին:

Վաճառողը հաշվետվութեան ներկայացնելիս կցում է նաև փաստաթղթերը: Ինչպէս որինակ զանձապահին հանձնած գրամները գրամական որդերը կամ ընթացիկ հաշիւն մուծած գրամները համար բանկից ստացած ստացագրերը: Ներկայացրված հաշվետվութեանը հաշվապահի կողմից ստուգվում է և հանձնվում վարչութեանը ի հաստատութեան: Հաշվետվութեանը գրքերում գրանցվում են միայն վարչութեան կողմից հաստատվելուց հետո:

Կորտնտեսականներից և անհատ տնտեսութեաններից ընդունված միջերփնեցիկ կազմակերպված ձևով վաճառելու համար վաճառողը վոչ մի հաշիվ չի կատարում: Նրանց հետ հաշիվ և տեսնում կոլխոզի վարչութեանն ըստ վորոշված կարգի և միջերփնեցիկ վաճառքից ստացված գումարի համեմատ:

Կորտնտեսական լեանութեանում, կայարաններում, շուկաներում վաճառողը պահեստապետի գրքի ձևով տանում է միջերփնեցիկ և նյութերի հաշվառման գիրք այն կարգով, ինչ կարգով տանում է պահեստապետը: Տարբերութեանը կայանում է նրանում, վոր «ումից է ստացված» կամ «ում է տրված» սյունյակներում վաճառողը միջերփնեցիկ ստանալիս ցույց է տալիս պահեստը կամ ֆերման, իսկ վաճառելիս միջերփնեցիկ քանակը և գինը. անհրաժեշտ է վորպէսզի կորտնտեսութեան վարչութեանը և վերըստուգիչ հանձնաժողովը հաճախակի և կանոնավոր հսկողութեան ունենան կորտնտեսական առևտրի գրվածքի, առանձնապէս վաճառողի կողմից վաճառած միջերփնեցիկ գնի վերա:

Բոլոր այն անձնավորութեանները, վորոնց հանձնված են միջերփնեցիկ կոլխոզային առևտրի համար, վորտաղարձ հաշվառքի գրքում (ձև № 47) հաշիվ յեն առնվում վորպէս առհաշիվ անձինք:

Այն դեպքում, յեթև կորտնտեսականներից և մենաստեաններից պահեստապետը կամ կրպակի վարիչը միջերփնեցիկ են ընդունում վաճառելու համար, հանձնողին տրվում է ընդունման անդորրագրի պատճեն (ձև №...): Միաժամանակ ստացված միջերփնեցիկ գրանցվում են հատուկ տեղեկագրում, (ձև № 22):

Տեղեկագրերը ներկայացվում է կորտնտեսութեան վարչութեանը, վորտեղ համաձայն այդ տեղեկագրի կատարվում է հաշ-

վառքը: Տեղեկագրում միերքների գները նշանակում են այն գներով, ինչ գներով վաճառված են միերքները:

ԱՇԽՈՐԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՏՐՎՈՂ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Կոլտնտեսության անդամներին միերքներ բաց թողնելը կարող է տեղի ունենալ միանվագ և սխտեմատիկ կերպով (ամեն որ):

Կոլտնտեսականների աշխուրերի հաշվին մասսայաբար մըթերք բաց թողնելիս կազմում են № 22 ձևը:

Ձև 16 22
1 IX 1933 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Տրվում է կոլտնտեսականներին ցորեն յուրաքանչյուր աշխուրին 2 կիլոգր. ում և ինչ (զրամ, ցորեն, նյութեր կեր):

№ ըստ կարգի	Ազգանուն անուն յեվ հայրանուն	Աշխուրերի քանակը	Հաշվով կամ քաշով	Գումար		Նշումներ ան գումարում գրելու մասին	Ստացողի ստորագրություն
				Ռ.	Կ.		
1.	Կարապետյ և Գ. Իվանի	150	300 կիլ	21		18	Կարապետյան
2.	Առաքելյան Դ. Խ.	240	480 »	33	60	142	Առաքելյան
3.	Բումին Պ. Ա. յեվ այլև	80	160 »	11	20	69	Բումին

Տեղեկագիրը կազմում է հաշվապահը, իսկ բաց թողնելու համար ստորագրում է վարչութունը. վերնագրում ցույց են տրվում տեղեկագրի №-ը, բաց թողնելու ժամանակը, ում և ինչ է տրվում: Տեղեկագրի բովանդակության մեջ ցույց է տրվում № ըստ կարգի, միերք ստացող կոլտնտեսականի անուն սղգանունը, աշխուրերի քանակը, վերի հաշվով տրվում է միերքը կամ զրամը: Հետևյալ սյունյակներում ցույց են տրվում բաց թողնելու վերջ միերքները, իսկ հետո զրամը: Բաց թողնելու ժամանակ պահեստապետը անդամագրքույկում նշանակում է բաց թողած մըթերքի քանակը և գումարը, իսկ տեղեկագրում նշանակում է գրքույկի №-ը: Հետևյալ սյունյակում միերք ստանալու ժամանակ ստորագրում է միերք ստացող կոլտնտեսականը:

Այդ տեղեկագիրը կոլտնոցի վարչության համար հանդիսա-

նում և վորպես հիմք զբանցումներ կատարելու, իսկ պահեստապետի համար արդարացնող փաստաթուղթ: Կոլտնտեսականին ավելի կամ պակաս չվճարելու համար կոլտնտեսություն հաշվապահը պարտավոր և կոլտնտեսականի հասանելիքը ճշտել՝ քննելով նրա անձնական հաշիվը, հաշվի առնելով նրան հասանելիք աշխուրհի քանակը, յուրաքարչյուր աշխուրհին հասանելիք նորման և նախկին վճարումները:

Մասայարար մեծ քանակություն մթերք բաժանելու ժամանակ կոլտնտեսականներին աշխատանքից չկտրելու և պահեստապետի կողմից մթերքների բաց թողնելն արագ կատարելու համար, անհրաժեշտ և նշանակել առանձին գրազեա անձնավորություններ՝ ոգնելու պահեստապետին, տեղեկագրում ստորագրել տալու և անդամագրքույկներում նշումներ կատարելու համար:

Այն կոլտնտեսություններում, վորտեղ մթերքներ բաց են թողնում վորոշ ժամանակաշրջանում, թե միանվագ և թե ամեն որ սրտեմատիկ կերպով (որինակ կաթի բաց թողնելը) հաշվառումը կատարվում և № 19 ձևի տեղեկագրով:

Յերբ ամեն որ մթերք են բաց թողնում, անդամագրքույկում ամեն որ նշումներ կատարելն աննպատակահարմար և, գրա համար անհրաժեշտ և կոլտնտեսականներին տալ մթերքների առանձին թերթիկ (ձև № 23).

Ձևվ № 23.

ԹԵՐԹԻԿ ՄԹԵՐՔ ԲՍՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հունվար ամսվա 1933 թ.

Անուն Ազգանուն Հայրանուն: Կարապետյան Գրիգոր միսակի

Ամիս թիվ.	Մ ք ե ր ք ի ա ն ու ն ք	քանակը	Գ ու մ ա ր ք
1.	Կաք.	1	— 30
2.	»	1	— 30
3.	»	1	— 30
4.	»	1	— 30
5.	» յեվ այլն.	1	— 30
Ընդամենը մեկ ամսում		30	9 —

Գումարը տառերով: Ինը ութբի.

Ստացողի ստորագրությունը՝ Կարապետյան Գրանցված և № 18 անդամագրքույկում:

31 | 1933 թ. հաշվետար Սեդրակյան

Կաթի մատան № 4 Ամբար № _____ և Ա. թ. (Մեկերի կամ նյութի անունը)

Ձևի № 19
21 | 1-ից — 31 | 1933 թ.

№ Հաս կարգի	Ուժեքային բաժնի	Ա Վ Ս Մ Յ Ձ Է Ը Թ										Ստացված արտա- դրանք	Քվի համար և թիվ	Ստացված արտա- դրանք	
		21	22	23	24	25	26	27	28	29	30				
1	Ստացված և	1120	1122	1123	1121	1123	1122	1127	1121	1125	1127	11136	336930	—	—
2	Համեմատված և վերաշահ.	885	882	884	886	890	890	891	899	890	888	8875	266250	—	Գրեքայն
3	ձաշարամիկ	15	15	15	10	15	15	15	12	10	15	135	4110	—	Կարապետյան
3	Մամկանառուրին	12	12	12	17	12	12	12	12	12	12	125	3750	—	Վասիլի
3	Հորքերին	40	38	38	38	38	45	47	47	46	45	122	12660	—	Գաննյան
5	Խաղամեղին	12	12	12	12	12	12	15	18	15	15	135	40,50	—	Հայրապետյան
1	Ընդամենը	964	959	961	963	967	974	980	978	973	975	9693	290820	—	Սահակյան
2	Սահակյան Մ. Գ.	2	1,5	1	2	1,5	2	1,5	1	1,5	1,5	1,55	3,65	112	Գավթյան
2	Գավթյան Ն. Գ.	1	2	1	1	1	1	1	1	1	2	10	3	114	Նորանյան
3	Նորանյան Վ. Ռ.	2	1	2	3	2	2	2	2	2	1	19	5,70	73	Սարգսյան
4	Սարգսյան Փ. Ղ., յիվ այլն	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1	14	4,20	82	—
Ընդամենը իրականում.		156	163	162	158	156	148	147	143	152	152	1537	461,15	—	—
Բոլորը		1120	1122	1123	1121	1123	1123	1127	1121	1125	1127	11231	3369,30	—	—

Այս թերթիկով յուրաքանչյուր որ զբանցվում են կոլխոգ-
նիկին բաց թողած մթերքները: Նաև (թերթիկը) ծառայում է
բաց թողած մթերքների զբանցումների ճշտությունը ստուգե-
լու, համեմատելով տեղեկագրի հետ:

Թերթիկը տրվում է միայն այն կոլտնտեսականներին, վո-
րոնք իրավունք ունեն շարունակարար ստանալու այս կամ այն
մթերքները: Յուրաքանչյուր անգամ մթերք ստացողը պարտա-
վոր է պահեստապետին ներկայացնել այս թերթիկը: Ամսվա
վերջում կոլտնտեսականի ստորագրությամբ թերթիկը ներկա-
յացվում է վարչությանը: Հաշվապահը, ստուգելով ամբողջ ամ-
սվա ընթացքում բախշման տեղեկագրով բաց թողնված մթերքնե-
րը և նրանց գումարները, անց է կացնում անդամագրույցվում
և զբանցման մասին կատարում է նշում բաշխման տեղեկա-
գրում: Թերթիկը տեղեկագրի հետ միասին մնում է վարչու-
թյան մոտ:

Յեթև կոլտնտեսականը կորցնում է թերթիկը, այն ժամա-
նակ պահեստապետի կողմից տեղեկագրում կատարած զբանցում-
ները պետք է համարել ճիշտ և կոլտնտեսականի կողմից վոչ մի
առարկություն չպետք է լինի: Այդ մասին նախապես կոլտնտե-
սականին պետք է զգուշացնել:

Վերամշակման համար բաց թողնված մթերքները ձևակերպ-
վում են կարգադրություն-պահանջագրի միջոցով: Վերամշա-
կումից ստացված պատրաստի մթերքները մուտք են արվում
բեռնագրով, իսկ նրանց յեղքի և մուտքի զբանցումները կա-
տարվում են մթերքների շարժման գրքով:

ՄԹԵՐՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ,
ՈԺԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՅՆԵՐՈՒՄ.—

Մթերքների և նյութերի հաշվառման գործը կատարվում է
վոչ միայն վարչության զբանցման կողմ, նա այլ պետք է զբաղված
լինի նաև մթերքների վերամշակման կամ պահպանման և ծախս-
ման տեղում, այսինքն արհեստանոցներում ու ձեռնարկներում,
ֆերմաներում, բրիգադներում հետևյալ կանոններով և ձևերով:

ա) Ապրանքային ֆերմաներում. մթերքների և նյութերի
շարժման հաշվառումը տարվում է նույն պահեստապետի գրքով
(ձև № 24): Պահեստում տարվող այդ գրքին վերաբերող բոլոր
կանոնները հիմնականում վերաբերում են նաև ապրանքային
ֆերմաներին:

Ապրանքային ֆերմաներում պահեստապետի մթերքների և

Նյութերի դիրքը պետք է արտացոլի մուտքի և ծախսերի բոլոր գործողութիւններն անկախ այն հանգամանքից, թե ֆերման վորտեղից է ստացել այդ մթերքները:

Կոլխոզի պահեստից ֆերմա մտած մթերքները և նյութերը մուտք են արվում համաձայն կարգադրութիւն-պահանջադրե-րի (ձև № 18), կերի ընդունման ակտերի և այլն: Ֆերմաների արտադրութիւնից ստացված արտադրանքների (կաթ, բուրգ, ձու, մեղր) մուտքը և յեղքը հաշվի յեն ստնվում համաձայն աշխատանքի հաշվառման փաստաթղթերի, ինչպիսին են՝ կաթի վերաբերյալ—կթողի հաշվառման թերթիկը (ձև № 30), բրդի, ձվի, մեղրի վերաբերյալ № 35 ձևը և այլն:

Կաթի ծախսումը գրանցվում է հետևյալ փաստաթղթերով, կոլտնտեսութիւնի անդամներին—բստ տեղեկագրի ձև № 19. գործարանում վերամշակելու, կոլխոզուկայի համար և այլն բստ բեռնագրի (ձև № 15), բստ հանձնողական ակտերի և այլն: Նույն կերպ պետք է գրանցել ապրանքային ֆերմայի մյուս բոլոր մթերքները:

Արտադրական սպառման համար բաց թողած կաթի (որինակ՝ հորթերին, գոծիններին կերակրել) ծախքերի տեղեկագիրը կազմում են № 19 ձևով: «Ում և բաց թողնված» սյունյակով ցույց է արվում ստացողի ազգանունն որինակ՝ «Հովհաննեսյանին քսան հորթի համար»:

Կերի ծախսերի հաշվառումը տարվում է ֆերմայի վարիչի կամ պահեստապետի կողմից (յեթե այդպիսին ֆերման ունի), համաձայն ծախքերի որդերների (պահանջագիր ձև № 18), վորպիսին դուրս է գրվում բրիգադիւրի ստորագրութիւնով կեր բաց թողնելու ժամանակ: Այդ պահանջագրում ցույց է տրվում քանի որվա համար և ինչ քանակով և բաց թողնված կերը: Յուրաքանչյուր ամիս ֆերմայի վարիչը կազմում է կերի շրջանառութիւն ու մնացորդի և ներկա անասունների քանակի տեղեկագիրը: Տեղեկագրի հակառակ կողմում տրվում է կերի վերաբերող հաշվետվութիւնը հետևյալ ձևով (ձև № 20)

Կերթի ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՆԱՑՈՐԴԻ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆ-
ՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՊՐԱՆՔ. ՖԵՐՄԱՅՈՒՄ

Հունվար ամսվա համար 1933 թ.

1. Անասունների շարժումը

Անասուններն ըստ ար- տադրական կամ տարի- քային խմբերի	Կար առ I	Մուգ և յեղել	Գույն և ունեցել Կնացել	Մնացել և առ I II	№ Հաստատող փաստաթղթի	
					Ըստ մուտքի	Ըստ յեղքի
Կթու կուկեր	65	10	8	67	135, 145	168-174
Ստերճ կուկեր	2	—	—	2	—	—
Յերինջներ	18	—	—	18	—	—
Հորթեր մինչև 2 ամս. .	16	18	10	24	16	17
» » 4 »	20	10	10	20	17	18
» » 6 »	21	10	6	25	18	19

2. Անասնակեր

Ա ն ու ն ը	Մնաց. առ I I	Մուտք	Ծախք	Մնաց. առ I II	Նշում- ներ
Քուսպ	140 ԿԻԼ.	500 ԿԻԼ.	420 ԿԻԼ.	220 ԿԻԼ.	—
Խոտ առվույտի	68	—	18	50	—
» դաշտի	38	—	8	30	—

Ֆերմայի վարիչ՝ Գ Ր Ի Գ Ո Ր Յ Ա Ն

Թվիչով անասնակերի բոլոր տեսակները, ինչպես կոշտ, նույնը և խտացրած, ֆերմայի վարիչը հետևյալ սյունյակներում նը-
շում է կերի մնացորդները հաշվետու ամսվա սկզբին, ամսվա ըն-
թացքում մուտքը, յեղքը և մնացորդները հետևյալ ամսի սկզբ-
բին: Համապատասխան ձևով ստուգված և հսկողութան յենթարկ-
ված հաշվետվությունը հանդիսանում է հաշվառման փաստա-
թուղթ մթերքների և նյութերի շարժման զբքում գրանցելու հա-

մարտ Կոլտնտեսութեան պահեստից ֆերմայի կարիքները համար ստացվող բոլոր մթերքները և նյութերը դուրս են գրվում վորպես ծախք, համաձայն կարգադրութեան-պահանջագրի (ձև №18). Իսկ կոշտ կերը—կերի շրջանառութեան և մնացորդի նշված տեղեկագրով (ձև № 20).

Սույն տեղեկագրերը տարվում և բոլոր անասնապահական ֆերմաներում:

Մթերքների և նյութերի հաշվառումը տարվում և փոռում, ճաշարանում, սմանդակ ձեռնարկներում, արհեստանոցներում, և այլն, նույն կանոններով ինչպես տարվում և սպրանքային ֆերմաներում:

Ճաշարաններում և փոքրում ծախսված մթերքների և նյութերի հաշվառումը տարվում և այն փաստաթղթերով, վորտեղ հաշվի յեն առնվում աշխտերի հաշվառումը (ձև № 37 և 38): Մթերքների և նյութերի ծախսումները բոլոր դեպքերում հսկողութեան և առնվում արտադրութեանից ստացված պատրաստի արտադրանքի յեղույթով և նորմաներով, համաձայն արտադրութեան ընտելիին (I ցենտ. այլուրից դուրս յեկած հացը, մեկ ճաշի համար անհրաժեշտ մսի, բանջարեղենի, աղի քանակը և այլն:

Արհեստանոցներում և այլ ձեռնարկներում մթերքների և նյութերի ծախսումների հաշվառումը տարվում և նույն կարգով № 36-րդ ձևով: Հսկողութեանը կենսագործվում և արտադրանքի յեղույթով, կատարած աշխատանքի ծավալով ու հաշվի առած աշխտերի քանակով:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՅՈՒՅՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Կոլտոզի ֆինանսական հաշվառումն ընդգրկում և ֆինանսական գործնիշյույն հետևյալ հիմնական բաժինները.

- 1) Ֆինանսական պլանի կատարման հաշվառումը.
- 2) Դրամական միջոցների հաշվառումը.
- 3) Ընթացիկ հաշիվների հաշվառումը.
- 4) Արժեքավոր թղթերի հաշվառումը.
- 5) Կոլտնտեսութեան ֆոնդերի և նրանց ծախսման հաշվառումը
- 6) Կոլտնտեսութեան յեկամուտների և ծախքերի հաշվառումը.
- 7) Կոլտնտեսութեան ստացած վակերի հաշվառումը.
- 8) Պետ. մթերողների և այլ կազմակերպութեանների, հիմնարկների ու անձերի հետ ունեցած հաշիվների հաշվառումը:

ՖԻՆՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Կոլտնտեսութեան Ֆինանսական միջոցների կազմակերպման հիմնական խնդիրն այն է, վերապահել ստույգ և լրիվ կատարել կոլտնտեսութեան տարեկան Ֆինանսական պլանում նախատեսու- նված առաջադրանքները և զբանով իսկ ստեղծել կոլտնտեսու- թեան արտադրական գործնեյութեան ամուր ֆինանսական բազա: Դրա համապատասխան ֆինանսական հաշվառման ամբողջ սիս- տեմի հիմքում պետք է զբլի կոլտնտեսութեան ֆինանսական տարեկան ինչպես և յեռամայա պլանի և ամսական նախահաշվի կատարման ընթացքի ամենուրյա սիստեմատիկ հսկողութեյունը: Պլանի կատարման յուրաքանչյուր առանձին հողվածի ճիշտ հաշվառումը հնարավորութեյուն կտա վարչութեյանը ապահովել ամենուրյա ղեկավարութեյունը կոլտնտեսութեան արտադրական ֆինանսական գործնեյութեյան նկատմամբ: Պլանների կատարման հաշվետվութեյունները կազմում են յեռամայակով, հետեյալ ձևով.

193 թ. _____ ամսվա

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կոլտնտեսութեյուն _____

Դրամական մուտք	Յենթադրվում և պլանով _____ յեռամայակով	Փաստորեն մուտք է յեղել			Շրջաններ յեռ. ընթ.
		Ամիս	Ամիս	Ամիս	
(Ցույց են տրվում մուտքի հողվածները համաձայն ֆինանսական պլանի)					
Դրամական յեղք	Յենթադրվում և պլանով _____ յեռամայակով	Փաստորեն յեղք է յեղել			Շրջաններ յեռ. ընթ.
		Ամիս	Ամիս	Ամիս	
(Ցույց են տրվում յեղքի հողվածները համաձայն ֆինանսական պլանի)					

Ինչպես յերևում և ընթացած ձևից յեռանայա հաշվետվութունն ունի յերեք ամսվա սյունյակ: Դրամական և ընթացիկ հաշիվները գրքերում ամսական գրանցումները վերջացնելուց հետո, հետևյալ հաշվետու ամսվա սկզբից հաշվետարը պարտավոր և քաղվածքներ հանել այդ գրքերից ու խմբավորել մուտքի և յեկքի բոլոր հոդվածները: Դրա համար յուրաքանչյուր գրանցումն անց և կացնում ֆին պլանի այս կամ այն հոդվածով (գրքերում մատիտով նշում թե ավյալ գրանցումը ֆին-պլանի վճիռ հոդվածին և վերաբերում): Ապա ամփոփում և ամսական շրջանառութվունների գումարն ըստ մուտքի և յեկքի ու գրանցում հիշյալ տեղեկագրի համապատասխան սյունյակներում:

Յուրաքանչյուր ամսական հաշվետվութվուն ստուգում և վերստուգելիչ հանձնաժողովը և ապա քննութվան են սուսում վարչութվան նիստում:

Յերեք ամիսների սյունյակների ավյալների գումարով, հաշվետվութվան մեջ ցույց են տալիս ֆինանսական պլանի յեռանայա կատարումը: Ջորս յեռանայակների հաշվետվութվունները հնարավորութվուն են տալիս կազմել տարեկան ֆինանսական պլանի կատարման հաշվետվութվունը:

Յեռանայա և տարեկան հաշվետվութվունները, վորպես կարևորագույն հաշվետու փաստաթղթեր, վերստուգելիչ հանձնաժողովի ստուգումից հետո, պետք և քննութվան յենթարկել կորտնտեսական ակտիվի և կորտնտեսականների ընդհանուր ժողովներում:

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Կոլտոգում յեղած ազատ դրամները, վորպես կանոն, պետք և պահվեն խնայողքամարկղում և ընթացիք հաշվով պետքանկում: Վարչութվունը հատուկ վորոշումով պարտավոր և սահմանել փողի այն գումարը, վորը պետք և պահվի իրեն կոլտոգի դրամարկղում: Այդ ազատ դրամները գտնվում են դանձապահի մոտ և գանձապահն անձնապես պատասխանատու յե, ինչպես այդ միջոցների լրիվ պահպանման, նույնպես և դրամարկղում սահմանված գումարից ավելին չպահելու համար:

Կորտնտեսութվան դրամարկղում յեղած դրամների մուտքի և յեկքի ընթացիկ հաշվառումը գանձապահը տանում և ռդրամարկղի հաշվառման գրքով» (ձև № 44):

Դրանցումն այդ գրքում կատարվում և հետևյալ ձևով:

Ամսի յիվ բիլ	Փաստաթղթի №-ը	Ումնից յիվ ինչի համար և ստացված կամ ում յիվ ինչի համար և վճարված	Մուտք ստացված յիվ հաշ- ված և)	Ֆիլ (տրված և դուրս և գրված)
1.	Մուտքի որ- դեր № 27	Առ 1/VI 1933 ք. դրամարկղի մնացորդը «Կարմիր արշալույս» կոլտնտեսությունից ճրա վանառած վաքսէլի համար	115 42	— —
2.	Մուտքի որ- դեր № 28	Մարգարյանից՝ ի հաշիվ մուտքի վճա- րի	112 50	— —
3.	Մուտքի որ- դեր № 29	Վերցրած և խնայողամարկղի ընթացիկ հաշիվից	10 —	— —
4.	Ֆիլի որդեր № 19	Վճարված և տեղեկագրով վարձու մասնա- գետներին մայիս ամսվա համար յիվ այլն	100 —	240 25
			— —	100 —

Ինչպես յերևում և որինակից, զիրքը կրում և միակողմանի
ձև, այսինքն մուտքի և յիլքի զրանցումները բովանդակութուն-
նը գրվում և միայն մեկ սյունյակում, մուտքի և յիլքի գումար-
ներն առանձին սյունյակներում: Գրանցումների բովանդակու-
թյունը հնարավորին չափ պետք և լինի մանրամասը, նկատի
ունենալով, վոր հետագայում ֆինանսական հաշվետվությունը
կազմելու ժամանակ դրամարկղի զրքից կատարվելու յեն քաղ-
վածքներ ու ֆինանսական հաշվետվության հիմնական բաժին-
ների հոգվածների խմբավորումներ:

Բերված որինակում «մնացորդ ամսվա սկզբում» առաջին
զրանցումը կատարում և գանձապահը հիմք ունենալով վերստու-
գիչ հանձնաժողովի կազմած ակաը, թե դրամարկղը ստուգված և
նախորդ ամսում և ընթացիք ամսվա վերջին որը դրամարկղում
յեղած կանխիկ գումարը: Հետագայում դրամարկղում ստացված
նոր միջոցները ձևակերպվում են անդորագրի մուտքի որդերով:
Անդորրագրերի մուտքի որդերների զրքույկը միշտ գտնվում և
գանձապահի մոտ:

Գանձապահը լրացնում և որդերներն յերկու որինակից, ա-
ռանց վորևե նախնական զրավոր կարգադրության դրամի ստաց-
ման մասին, վորից հետո մի որինակը հանձնվում և վճարողին,
վորպես անդորրապիլը, իսկ մյուսը մնում և գանձապահի մոտ:

Վորպես կանոն, մուտքի որդերները կազմվում են վորևե
զրավոր փաստաթղթի հիման վրա, վորը հաստատում և թե, ին-

չու և ինչ հաշիվներով և ավյալ գումարը գրանցվում որդերի մեջ:

Այդ փաստաթղթերն են—վճարողների գրավոր հայտարարութ յուհները, հիմնարկների տեղեկանքները, վարոնցից ստացվում և գրամը, հաշիվները, նամակները, պարտավորութ յուհները և այլն: Այդ փաստաթղթերը միացվում են որդերին: Մուտքի որդերներն ունենում են իրենց հերթական համարը: Մուտքի որդերների համարակալումները չպիտի միանան յեւքի փաստաթղթերի և որդերների համարակալումներին (վարոնց մասին կասվի ներքևում): Դրամական որդերի վրա գումարը գրվում և բառերով: Կուսնտեսութ յան անդամից վորպես մուտքի կամ նպատակային վճար, դրամ ստանալու դեպքում, այդ մուծումները գանձապահը միաժամանակ գրանցում և կուսնտեսականի աշխարքույկում և գրամարկղի հաշվառման գրքում, վորպես մուտք գրանցելու ժամանակ գրվում և կուսնտեսականի աշխարքույկի համարը: Կուսնտեսականի աշխարքույկում գրանցելու կարգը ցույց կարվի ներքևում: Գանձապահը գրամի բաց թողնելը և գրամարկղի գրքում գրանցելը կատարում և գրամարկղի յեւքի որդերների հիման վրա:

Յեւքի որդերներն առանձնահատուկ տարբերութ յուհը մուտքի որդերներից այն և, վոր յեւքի որդերների վրա պարտադիր կերպով լինում և վարչութ յան անձնական կարգադրութ յուհը:

Առանց վարչութ յան նախադահի կամ Ֆինանսական մասը տեղավարող վարչութ յան անդամի գրավոր կարգադրութ յան, գանձապահն իրավունք չունի դրամ բաց թողնել: Դրամական յեւքի որդերի գրքույկը պահվում և հաշվետարի մոտ:

Հաշվետարը փաստաթղթերի հիման վրա գրում և որդերը և ստորագրում վարչութ յան նախադահի ստորագրելուց հետո՝ հանձնում և գանձապահին՝ դրամը բաց թողնելու համար:

Դրամը բաց թողնելիս գանձապահը դրամ ստացողին անպայման ստորագրել և տալիս հենց որդերի վրա և հենց նույն այդ որդերի վրա նշում և թե գրամական գրքի վոր յերեսում կամ ինչ համարով և կատարված այդ գրանցումը, ու իր ստորագրութ յամը հաստատում և այդ տեղեկանքը: Դրամական յեւքի որդերներն ունենում են իրենց հերթական համարները:

Յեւքի որդերները գրվում են հետևյալ ձևով:

ԴՐԱՄԱԿԱՆ ՅԵԼՔԻ ՈՐԴԵՐ № 19

5 հունիսի 1933 թ.

Ռ. 240 կոպ. 25

Վճարել (ում) վարձու մասնագետին, ինչի համար, ըստ տեղեկագրի մայիս ամսվա աշխատավարձը (յերկու հարյուր քառասուն ուսուրի) ուսուրի. 25 կոպ.

Գումարը բառերով.

Հաշվետար՝ Գրիգորյան.

Վարչության նախ. Առևտրային

Ստացա համաձայն տեղեկագրի

Փաստաթուղթը գրանցված է գրամական գրքում № 83.

Գանձապահ՝ Առաքելյան

Թղթի խնայողության և գրանցումների քանակը կրճատելու նպատակով, կարելի չէ նաև չգրել գրամական չեքի որդեր, այդ դեպքում հաշվապահը վճարման փաստաթղթի վերա դնում եշտամբ հետևյալ բովանդակությամբ՝ «փաստաթղթի գումարն է Ռուրլ. կոպ.

ճիշտ է հաշվետար _____

Վճարել _____ Վարչության նախագահ _____

Գումարը Ռուրլ. կոպ. Ստացա _____ (ստորագ.)

Փաստաթուղթը գրամական գրքում գրանցված է № _____

Գանձապահ՝ _____ »:

Դրամ բաց թողնելու հիմնական փաստաթղթերը հանդիսանում են.

1) Գնված մթերքների կամ գույքի արժեքի հատուցման դեպքում,—հաշիվը պետք է կազմված լինի սահմանված ձևով:

2) Վարձու աշխատողներին վճարելու դեպքում—վճարման տեղեկագիրը հաստատված վարչության նախագահի մակագրությամբ և կազմված հաշվապահի կողմից, տեղեկագրում հիշատակված յուրաքանչյուր անձն իր անվան դիմաց ստորագրում է և ստանում գրամը:

3. Կոլտնտեսականներին դրամ բաց թողնելու դեպքում—կամ վարչության առանձին կարգադրություներ (ձև № 18) կամ ընդհանուր տեղեկագրով (ձև № 22): Անդամներին դրամ բաց թողնելիս գանձապահը վճարված գումարն անմիջապես անց է կացնում կոլտնտեսականի անդամագրքույկում և գրքույկի №-ը նշում է տեղեկագրում:

4. Գյուղ հարկ, ապահովագրական և պետութեանը այլ մուծումներ կատարելիս համապատասխան ստացագրերը:

Առ հաշիվ վճարված գումարները՝ դրամական գրքում գրանցելուց հետո, պետք է անմիջապէս փոխադարձ հաշվառքի գրքով անցկացնել առ հաշիվ անձանց հաշիւին:

Յուրաքանչյուր յերկու-յերեք որը մեկ անգամ (համեմայն դեպս վոչ ուշ հինգ որից), գանձապահը հաշվապահին և հանձնում թե մուտքի և թե յեւթի փաստաթղթերը: Հաշվապահը փաստաթղթերը ստանալու առթիվ ստորագրում և դրամարկղի գրքում որինակ, «մուտքի փաստաթղթեր №№ 16—14, ընդհանուր գումարով 817 ո. և յեւթի փաստաթղթեր №№ 12—17 գումարով 420 ոուրլ. 25 կոպ. ստացա հաշվետար՝ Գրիգորյան, 3-ն հունիսի 1933 թ.»:

Ստացված փաստաթղթերը հաշվապահը համեմատում և գանձապահի գրքի գրանցումների հետ և հետո անց և կանցնում դանազան հաշվեկրքերում, որինակ՝ գնված գույքի հաշիվը հաշվապահն անց և կացնում գույքամատյանի մուտքում: Յերկարատե վարկեր ստանալիս անց և կացվում վարկերի հաշվառման գրքում և այլն:

Մեծ կոլտոններում, վորտեղ որվա ընթացքում կատարվում են մեծ քանակութեամբ դրամական գործառնութեաններ, դրամարկղի գրքում կարելի չի գրանցումները կատարել կրճատ հետեյալ ձևով: Գանձապահը տանում և դրամարկղային որագիւր (Համամիութենական Կազմինի կողմից վորոշված № 31 ձևով) յերկու որինակից պատճհան թղթով: Ամեն յերեկո գանձապահը կրտում և յերկրորդ որինակը և հանձնում հաշվապահին: Հաշվապահը այդ թերթիկները կարճում և հերթական կարգով: Այդպիսով առանց ալելրորդ աշխատանք գործադրելու, կոլտնտեսութեան մեջ սահմանվում և դրամների շարժման կրկնակի հաշվառում, մեկ որինակը մնում և գանձապահի մոտ, իսկ մյուսը կոլտնտեսութեան հաշվապահի մոտ:

Գանձապահն ամբողջ ամսվա գրանցումները կատարելուց հետո, հաշվում և մուտքի և յեւթի գումարները և դուրս բերում մնացորդը: Գրքում ցույց տրված մնացորդը պետք և համապատասխանի դրամարկղի փաստացի մնացորդին: Ամսական ընդհանուր գումար տալուց հետո, վերստուգիչ հանձնաժողովը պարտադիր կերպով անց և կացնում դրամարկղի ստուգում: Վերստուգիչ հանձնաժողովի պարտավորութեաններին մեջ պետք և մտնեն

